

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՐՈՒԽԱՆՑԱՆ ՏԱԹԵՎԻԿ ԱՐՄԵՆԻ

**ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԺԲ.00.04 (դատական իրավունք, դատարանակազմություն,
քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական
դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն,
փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության
տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի
հայցման համար ատենախոսության**

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2022

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

САРУХАНЯН ТАТЕВИК АРСЕНОВНА

ИНСТИТУТ МЕДИАЦИИ В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ РА

АВТОРЕФЕРАТ

**диссертации на соискание ученой степени кандидата
юридических наук по специальности**

**12.00.04—«Судебное право - судоустройство, гражданский процесс,
административный процесс, уголовный процесс, криминалистика, судебная
экспертиза, адвокатура, теория оперативно-розыскной деятельности»**

ЕРЕВАН - 2022

**Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝

իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
Սերգեյ Գուրգենի Մեղրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Սամվել Աղվանի Դիլբանդյան
իրավ. գիտ. թեկնածու
Պավել Դավիթի Թադևոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ. դեկտեմբերի 26-ին ժ. 14³⁰-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈԿ-ի 001 իրավաբանական մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան, 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2022թ. նոյեմբերի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական

քարտուղար, իրավ. գիտ. թեկ.

Ճ. Ա. Ստեփանյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель:

кандидат юрид. наук, доцент
Сергей Гургенович Мегрян

Официальные оппоненты:

доктор юрид. наук, профессор
Самвел Агванович Дилбандян

кандидат юрид. наук

Павел Давидович Тадевосян

Ведущая организация: Российско-армянский университет

Защита состоится 26-ого декабря 2022г. в 14³⁰ часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, Алека Манукяна, 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 16-ого ноября 2022г.

Ученый секретарь специализированного совета,

кандидат юридических наук

Ж. А. Степанян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Իրավաբանական գրականության մեջ արդարացիորեն արտահայտվում է տեսակետ, համաձայն որի՝ մարդու իրավունքների և ազատությունների ապահովման մեխանիզմի արդյունավետության բարձրացումը չի կարող տեղի ունենալ բացառապես իրավական կարգավորման իմպերատիվ մեթոդների կիրառմամբ: Նշված հիմնավորմամբ նշվում է «ինքնակարգավորման» մեխանիզմների իրագործման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման անհրաժեշտության մասին: Շուկայական տնտեսության և տնտեսական գործունեության ազատության երաշխավորման պայմաններում իրավունքի սուբյեկտները նախընտրում են վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերը, այդ թվում՝ հաշտարարությունը՝ պայմանավորված նշված ընթացակարգի մի շարք առավելություններով:

Վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգեր տարածումը և արդյունավետ կիրառությունը նպաստում են դատարանների ծանրաբեռնվածության զգալի նվազմանը, ինչն էլ, իր հերթին, հանգեցնում է դատարանների գործունեության արդյունավետության էական աճի: Դատարանների գերծանրաբեռնվածությունն անխուսափելիորեն հանգեցնում է դատավարական ժամկետների խախտման, գործերի դատաքննության նախապատրաստման և դատաքննության որակի անկման, դատական ակտերի չհիմնավորվածության, որոնք էլ համակցության մեջ հանգեցնում են դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի խախտման: Դատարանների ծանրաբեռնվածության պայմաններում, երբ օբյեկտիվ գործոններով պայմանավորված հնարավոր չէ երաշխավորել ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը, շահագրգիռ անձի համար իրավունքների և օրինական շահերի պաշտպանության դատական ձևը հաճախ կարող է արդյունավետ չլինել: Մինչդեռ, հաշտարարության գործընթացում քննարկումների և բանակցությունների միջոցով ձեռք են բերվում առավել բավարարող և տևական լուծումներ՝ ապահովելով վեճերի արդյունավետ կարգավորումը: Բանակցությունների արդյունքում փոխադարձ պահանջների հաշվառմամբ ձեռք է բերվում համաձայնություն և կողմերը հասնում են առավել բավարարող, կայուն արդյունքի՝ ի տարբերություն մրցակցային դատավարության, երբ կայացվում է որոշում, որի արդյունքում մի կողմը ստանում է պահանջների բավարարում, իսկ մյուսի համար առաջանում են անբարենպաստ հետևանքներ:

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունում հաշտարարության ինստիտուտը ներդրվել է բոլորովին վերջերս՝ առկա է դրա համապարփակ ուսումնասիրման անհրաժեշտություն՝ գործնական կիրառության ընթացքում առաջացող խնդիրները վեր հանելու, դրանց լուծումներն առա-

ջարկելու նպատակով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրա արդյունավետ գործողությունը կարող է նպաստել դատական համակարգի ծանրաբեռնվածության մակարդակի նվազեցմանը՝ ազդելով դատական պաշտպանության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև կայացվող դատական ակտերի որակի վրա: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունում առկա են հաշտարարության ինստիտուտի զարգացման հեռանկարներ, ուստի անհրաժեշտ է իրականացնել հաշտարարության ինստիտուտի համակողմանի տեսաիրավական վերլուծություն՝ դրա կիրառությունը խթանելու նպատակով:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը հաշտարարության և դրա արդյունքում կնքվող հաշտության համաձայնության առանձնահատկությունների ուսումնասիրությունն է՝ գործնական կիրառության ընթացքում առաջացող խնդիրները վեր հանելու, դրանց լուծումներն առաջարկելու և դրանով իսկ հաշտարարության կիրառության հնարավոր խոչընդոտները վերացնելու նպատակով: Միաժամանակ, աշխատանքի նպատակը հաշտարարության առավելությունների վերհանումն է՝ դրա կիրառությունը խրախուսելու նպատակով:

Նշված նպատակին հասնելու համար սույն աշխատանքի շրջանակներում կատարված ուսումնասիրության ընթացքում մեր առջև դրված են եղել հետևյալ խնդիրները՝

- բացահայտել հաշտարարության էությունը՝ առանձնացնելով դրան բնորոշ հատկանիշները.
- հաշտարարության կիրառելիության չափանիշների հիման վրա կանխորոշել վեճերի շրջանակը, որոնցով առավել նպատակահարմար է հաշտարարության նշանակումը.
- սահմանել հաշտարարության և վեճերի լուծման այլընտրանքային այլ ընթացակարգերի հարաբերակցությունը.
- ուսումնասիրել հաշտարարության սկզբունքները. կամավորության սկզբունքի շրջանակում ուսումնասիրել պարտադիր հաշտարարության ներդրման նպատակահարմարությունը.
- վերլուծել հաշտարարության կիրառման պայմանները, այդ թվում՝ ուսումնասիրել հաշտարարության վերաբերյալ համաձայնության վավերության պայմանները.
- վեր հանել հաշտարարության ընթացակարգին բնորոշ առանձնահատկությունները և սահմանել հաշտարարության փուլերը.
- վերլուծել հաշտարարության արդյունքում կնքվող հաշտության համաձայնության իրավական բնույթը և դատարանի կողմից հաշտության համաձայնության հաստատման առանձնահատկությունները.

• հաշտարարության ինստիտուտի՝ համակողմանի տեսաիրավական վերլուծության արդյունքում նպաստել հաշտարարության վերաբերյալ օրենսդրության զարգացմանը, ինչպես նաև ինստիտուտի գործնական կիրառության խթանմանը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը հաշտարարության՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգի կիրառման միջոցով վեճերի կարգավորմանն ուղղված հասարակական հարաբերությունների համակցությունն է: Հետազոտության առարկան հաշտարարության միջոցով վեճերի կարգավորման (լուծման) ինստիտուտն է և առկա հիմնախնդիրները:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը: Հայրենական իրավական համակարգում հաշտարարության ինստիտուտի համապարփակ տեսաիրավական վերլուծության չի իրականացվել՝ թեև թեմային անդրադարձ է կատարվել առանձին գիտական հոդվածների տեսքով: Այնուամենայնիվ, առկա է համալիր հետազոտության իրականացման անհրաժեշտություն՝ հաշվի առնելով, որ հաշտարարության ինստիտուտը հայրենական իրավական համակարգում ներդրվել է բոլորովին վերջերս և առկա է դրա կիրառելիությունը խրախուսելու անհրաժեշտություն:

Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել Ս.Վ. Լազարևի, Ս.Բ. Կալաշնիկովայի, Յու. Ս. Կոլյանիկովայի, Ս.Ս. Ալեկսեևի, Վ.Պ. Վոլոժանինի, Մ.Ա. Գուրվիչի, Դ.Լ. Դավլիդենկոյի, Ի.Մ. Զայցևի, Դ. Շապիրոյի, Ի. Յու. Զախարյաշևայի, Կ.Բ. Կոմիսարովի, Ա.Ն. Կուրբազարովի, Է.Բ. Նոսիրևայի, Մ.Ա. Ռոժկովի, Դ.Մ Չեչուտի, Վ.Ս. Շերստյուկի, Վ.Վ. Յարկովի, Կ. Աննենկովի, Գ.Ֆ. Շերշենևիչի, Ե.Վ. Բրունցեվայի, Ս. Մոխսևի, Ե.Վ. Պիլեխինայի, Վ.Վ. Յարկովի, Խ. Բեսևերի, Մ. Պելի, Ռ. Ֆիշերի, Լ. Բոուլի, Մ. Նեսիկի, Ս. Մենկել-Մեդրուի, Ֆ. Սանդերի, Դժ. Ստալբերգի, Վ. Հովհաննիսյանի, Ս. Մեդրյանի, Տ. Մարկոսյանի, Մ. Մանուկյանի և այլ հեղինակների աշխատությունները: Հետազոտության տեսական հիմքն են կազմում ինչպես փիլիսոփայության (այդ թվում՝ գիտական փիլիսոփայության), սոցիոլոգիայի, տրամաբանության, այնպես էլ իրավագիտության տարբեր բնագավառներում կատարված հետազոտությունները՝ մենագրություններ, ատենախոսություններ, դասագրքեր, ձեռնարկներ, մեկնաբանություններ, գիտական հոդվածներ:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Ատենախոսության նորմատիվային հենքը կազմել է հաշտարարության ինստիտուտի կանոնակարգմանն ուղղված Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Հետազոտության իրավական և փորձառական հիմք են հանդիսացել նաև արտասահմանյան երկրների նորմատիվ իրավական

ակտեր, Մահմանադրական դատարանի որոշումներ, Վճռաբեկ և վերաքննիչ դատարանների, առաջին ատյանի ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների դատական ակտեր, ինչպես նաև այլ գործնական նյութեր (պայմանագրեր):

Հետազոտության

ընդհանուր

մեթոդաբանությունը:

Ատենախոսությունում կիրառվել են ընդհանուր գիտական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, սինթեզի, անալիզի և այլ մեթոդներ, ինչպես նաև մասնագիտական հատուկ մեթոդներ՝ համակարգակառուցվածքային, իրավահամեմատական մեթոդները, որոնց օգնությամբ վերլուծվել է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների՝ հաշտարարության ընթացակարգին վերաբերելի օրենսդրությունը, գիտահետազոտական աշխատանքները, դատական ակտերը, բացահայտվել են այդ բնագավառում առկա տեսական և գործնական հիմնահարցերը, ներկայացվել են դրանց լուծմանն ուղղված գործնական առաջարկներ:

Ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթն այն է, որ հայրենական իրավական համակարգում առաջին անգամ իրականացվում է հաշտարարության՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգի համալիր ուսումնասիրություն՝ վեր հանելով դրա կիրառության հնարավոր խոչընդոտները և օրենսդրական բացերը: Ներկայացվում է հաշտարարության տեղը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ձևերի շրջանակում և հարաբերակցությունը վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգերի հետ: Ներկայացվում են հաշտարարության սկզբունքները և հայրենական իրավական համակարգում դրանց գործողության շրջանակը, հաշտարարության ընթացակարգային առանձնահատկությունները: Վերլուծվում են հաշտարարության արդյունքում կնքված հաշտության համաձայնության իրավական բնույթը և դատարանի կողմից հաշտարարության արդյունքում կնքված հաշտության համաձայնության հաստատման առանձնահատկությունները:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում և գիտագործնական բնույթի առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Հաշտարարությունն ընթացակարգ է, որն ուղղված է կողմերի ջանքերով և անկողմնակալ երրորդ անձի՝ հաշտարարի օժանդակությամբ՝ առանց լուծումներ առաջադրելու կամ որոշում կայացնելու իրավասության, բանակցությունների արդյունքում հաշտության համաձայնության հասնելուն և կարող է ունենալ երկակի նշանակություն, մասնավորապես.

ա) հաշտության համաձայնությունը դատարանի հաստատմանը ներկայացնելու և դատարանի կողմից հաստատվելու պարագայում առաջացնում է նյութափրավական և դատավարական հետևանքներ և հանդես է գալիս որպես **վեճի լուծման ընթացակարգ**։

բ) հաշտության համաձայնությունը դատարանի հաստատմանը չներկայացնելու պարագայում առաջացնում է քաղաքացիափրավական գործարքին բնորոշ իրավական հետևանքներ և հանդես է գալիս որպես **վեճի կարգավորման ընթացակարգ**։

2. Կախված հաշտարարության կամավորության սկզբունքի գործողության աստիճանից և դատավարական հարկադրանքի միջոցների ներգործության հնարավորությունից՝ տարբերակվում են.

ա) կամավոր հաշտարարությունը, երբ կողմերն ազատորեն՝ առանց որևէ արտաքին միջամտության և փոխադարձ համաձայնությամբ նախաձեռնում են հաշտարարության ընթացակարգ և կարող են ցանկացած պահի դադարեցնել այն՝ առանց անբարենպաստ հետևանքների.

բ) պարտադիր հաշտարարությունը, եթե վեճի կարգավորման՝ օրենքով կամ պայմանագրով նախատեսված արտադատական կարգի պահպանումը դիտարկում է որպես հայց հարուցելու (դատական պաշտպանության դիմելու) իրավունքի ծագման նախադրյալ, և դատարանն իրավասու է նշված կարգը պահպանված չլինելու պարագայում վերադարձնելու հայցադիմումը կամ հայցը թողնելու առանց քննության, այսինքն՝ այն դեպքերը, երբ կողմի՝ դատական պաշտպանության իրավունքը ծագում է բացառապես այն դեպքում, երբ վերջինս պահպանել է մինչև դատարան դիմելը վեճը հաշտարարի միջոցով լուծելու պարտադիր պահանջը.

գ) հարկադիր հաշտարարությունը, երբ օրենսդիրը դատավարական հարկադրանքի միջոցների ներգործության սպառնալիքով դատարանին հնարավորություն է ընձեռում կողմերին հարկադրել վեճը կարգավորել հաշտարարության միջոցով՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով անհամաչափ բեռ դնել դատավարության այն մասնակցի վրա, որը դատարանի կողմից անհարգելի ճանաչված պատճառներով հրաժարվել է մասնակցել հաշտարարությանը:

3. ՀՀ օրենսդրությամբ հստակեցված չէ վեճերի այն շրջանակը, որոնցով հաշտարարությունը կիրառելի չէ, սակայն վիճելի իրավահարաբերության բնույթն ու պաշտպանության հայցվող արժեքի կարևորությունը՝ որոշ գերակա շահերի առկայության պարագայում պահանջում են դրանց պաշտպանությունն իրականացնել դատական կարգով՝ հաշվի առնելով դատավարական կարգն ու կայուն երաշխիքները, դատական միջամտության անհրաժեշտությունը և հաշտարարի հսկողական գործառույթների բացակայությունը:

Ուստի, այդպիսի գերակա շահերի առկայության պարագայում անհրաժեշտ է՝

ա) դատարանին ընձեռել վեճը հաշտարարի միջոցով լուծելու վերաբերյալ համաձայնության առկայության պայմաններում գործն ըստ էության քննելու հնարավորություն,

բ) բացառել գաղտնիության պայմանի առկայության հիմքով առանց դատարանի կողմից հաշտության համաձայնությունը հաստատելու գործի վարչաթի կարճելու հնարավորությունը,

գ) բացառել նախքան դատարան դիմելը հաշտարարության իրականացման պարտադիր պահանջ նախատեսելու հնարավորությունը:

Որպես այդպիսի գերակա շահ կարող են դիտարկվել մասնավորապես սպառողների շահերը, ծնողական իրավունքներն իրականացնելիս երեխայի կենսական շահերի ապահովումը, երեխայի լավագույն շահերի հաշվառումը, անչափահաս, անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, սեփականության իրավունքի սահմանափակումը, շրջակա միջավայրի պահպանության, բնական պաշարների ողջամիտ օգտագործման հետ կապված իրավահարաբերությունները, հանրության առողջության պահպանության և անվտանգության ապահովումը, կոռուպցիոն ռիսկերի առկայությունը և պետության գույքային շահերի պահպանությունը:

4. Որպես դատարանի նախաձեռնությամբ հաշտարարության նշանակման չափանիշ դիտարկվում է վեճը հաշտությամբ ավարտելու հավանականությունը, որը գնահատելիս դատարանը պետք է համակցության մեջ դիտարկի մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, մասնավորապես՝

Սուբյեկտիվ գործոններն են կողմերի շահերի ընդհանրությունը, վեճը հաշտարարությամբ լուծելու պատրաստակամությունը կամ տրամադրվածությունը, նախկինում վեճը հաշտությամբ լուծելու փորձերի առկայությունը, կողմերի հարաբերություններում լարվածության (խզվածության) աստիճանը, կողմերի փոխկապակցվածությունն ու հարաբերությունների երկարատև բնույթը, կողմերի հարաբերությունները հետագայում շարունակելու հնարավորությունը:

Օբյեկտիվ գործոններն են սուբյեկտային կազմը (հաշտարարության կողմերը և դատավարության կողմերը պետք է համընկնեն), վիճելի իրավահարաբերության նկատմամբ հաշտարարության կիրառելիությունը (օրենսդրական արգելքի բացակայությունը), կողմերի կարգավիճակի և լիազորությունների միջև էական անհավասարակշռության բացակայությունը, օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի մեկնաբանման և միատեսակ կիրառութ-

յան, իրավունքի զարգացման անհրաժեշտությունը:

5. Վերաքննիչ դատարանին վարույթի ցանկացած փուլում հաշտարարություն նշանակելու իրավասություն վերապահելը չի բխում վերաքննիչ դատարանների սահմանադրաիրավական առաքելությունից, քանի որ վերաքննիչ վարույթում հաշտարարության իրականացումը գործին մասնակցող անձանց կողմից տնօրինչականության սկզբունքի իրացման արդյունք է և ուղղված չէ առաջին ատյանի դատարանների դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության երաշխավորման նպատակով դատական վերանայման գործառույթի իրացմանը, և որքան ավելի բարձր է դատական ատյանը, այնքան տնօրինչականության սկզբունքը պետք է դրսևորվի սահմանափակ ծավալով՝ պայմանավորված տվյալ դատական ատյանի՝ Սահմանադրությամբ կանխորոշված դերով և գործառույթներով:

6. Օրենսդրի կողմից հստակ չեն տարանջատվել «վեճի կարգավորման մինչդատական կարգ» և «վեճի կարգավորման արտադատական կարգ» եզրույթները:

Վեճի կարգավորման մինչդատական կարգը՝

✓ նախատեսված է օրենքով կամ պայմանագրով՝ որպես դատական պաշտպանության իրավունքի ծագման պարտադիր պայման,

✓ օրենքով նախատեսված մինչդատական կարգը կողմերի կամքի ազատ արտահայտության արդյունք չէ (օրինակ՝ կոլեկտիվ աշխատանքային վեճերի քննարկումը հաշտեցման հանձնաժողովում),

✓ չպահպանելը հայցադիմումը վերադարձնելու կամ հայցը առանց քննության թողնելու հիմք է:

Վեճի կարգավորման արտադատական կարգը՝

✓ կողմին չի գրկում իրավունքի պաշտպանության հայցով դատարան դիմելու հնարավորությունից,

✓ կողմերի կամքի ազատ արտահայտության արդյունք է,

✓ հայցադիմումի վերադարձի կամ հայցը առանց քննության թողնելու հիմք է, եթե պատասխանողը հղում է կատարում համապատասխան համաձայնությանը:

Համապատասխանաբար, հաշտարարությունը կարող է հանդես գալ և՛ որպես վեճի կարգավորման մինչդատական կարգ, և՛ որպես վեճի կարգավորման արտադատական կարգ՝ համապատասխան դատավարական հետևանքներով, մասնավորապես՝ մինչդատական կարգը չպահպանելու դեպքում դատարանը վերադարձնում կամ առանց քննության է թողնում հայցը, արտադատական կարգը չպահպանելու դեպքում՝ վերադարձնում կամ առանց քննության է թողնում հայցը, եթե պատասխանողը հղում է կատարում տվյալ վեճը հաշտարարի միջոցով լուծելու վերաբերյալ համաձայնությանը:

7. Հաշտարարության վերաբերյալ միջազգային իրավական ակտերով նախատեսված կառուցակարգերը երաշխավորում են, որ հաշտարարության դիմելը չպետք է խոչընդոտի դատական պաշտպանության իրավունքի իրացմանը, հետևաբար՝ ներպետական օրենսդրությամբ պետք է երաշխավորվեն դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների բովանդակությանը համարժեք երաշխիքներ, ներառյալ՝ հաշտարարության իրականացման արդյունքում հայցային վաղեմության ժամկետների հաշվարկման տեսանկյունից՝ երաշխավորելով, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է ոչ միայն կամավոր հաշտարարության իրականացման դեպքում՝ հաշտարարության մասին համաձայնության հիման վրա, այլև՝ պարտադիր հաշտարարության դեպքում, երբ հաշտարարության իրականացման պահանջը նախատեսված է օրենքով:

8. Հաշտարարության ընթացակարգի ճկունությունը կողմերին հնարավորություն է ընձեռում դուրս գալ հայցի առարկայի շրջանակից և վեճը կարգավորել փոխադարձ շահերի հաշվառմամբ՝ հաշտության համաձայնությամբ տնօրինելով այնպիսի իրավունքներ կամ շահեր, որոնք դուրս են հայցի առարկայից, սակայն որպես տնօրինչականության արդյունքում սկզբնապես ներկայացված հայցային պահանջների փոփոխության թույլատրելի սահման պետք է դիտարկել այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, ինչպես նաև տվյալ վեճի ենթակայությունն առաջին ատյանի դատարանի իրավասությանը:

Շեղանկությունն տեսական և գործնական նշանակությունը:

Շեղանկությունն նշանակությունն այն է, որ իրավաբանական դոկտրինում՝ ընդհանրապես և հայրենական իրավաբանական դոկտրինում առաջին անգամ իրականացվել է հաշտարարության ինստիտուտին նվիրված համալիր հետազոտություն: Աշխատանքում արված վերլուծությունները և հետևությունները կարող են օգտագործվել հաշտարարության ինստիտուտի հետագա տեսական վերլուծության, ինչպես նաև դասավանդման գործընթացներում: Շեղանկության աշխատանքի արդյունքները կարող են օգտակար լինել դատարանների կողմից կոնկրետ վեճով հաշտարարության նշանակման նպատակահարմարությունը պարզելիս: Բացի այդ, հաշտարարության ընթացակարգային առանձնահատկությունները կարող են հիմք ընդունվել հետագայում հաշտարարության իրականացման կանոններ սահմանելիս և հաշտարարների վարքագծի կանոններ սահմանելիս: Կատարված հետազոտությունը կարող է օգտագործվել նաև իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության մեջ:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը

պատրաստվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնում: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից սահմանված գիտական ամսագրերում և ժողովածուներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք արտացոլված են տասնմեկ պարագրաֆներում, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը՝ «Հաշտարարության որպես վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգի էությունն ու սկզբունքները» վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆից:

«Հաշտարարության ընդհանուր բնութագիրը» վերտառությամբ 1.1 պարագրաֆում ներկայացվել են հաշտարարության ինստիտուտի ծագումն ու զարգացումը, հաշտարարության կիրառման նյութաիրավական և դատավարական հիմքերը, տրվել է հաշտարարության բնորոշումը ներկայացվել դրա տեղն ու դերը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ձևերի և եղանակների շրջանակում:

«Հաշտարարության կիրառելիության չափանիշները» վերտառությամբ 1.2 պարագրաֆում ներկայացվել են տարաբնույթ իրավահարաբերություններում հաշտարարության կիրառելիության չափանիշները:

«Հաշտարարության սկզբունքները» վերտառությամբ 1.3 պարագրաֆում ներկայացվել են հաշտարարության՝ որպես ընթացակարգային գործունեության տեսակի հիմնական սկզբունքները:

«Հաշտարարության կամավորությունը և պարտադիր հաշտարարությունը որպես կամավորության սկզբունքից բացառություն» վերտառությամբ 1.4 պարագրաֆում ներկայացվել են կամավոր, պարտադիր և հարկադիր հաշտարարության առանձնահատկությունները՝ համապատասխան իրավական հետևանքներով:

Երկրորդ գլուխը՝ «Հաշտարարության իրականացումը» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆից:

«Հաշտարարության ընթացակարգը» վերտառությամբ 2.1 պարագրաֆում ներկայացվել են հաշտարարության ընթացակարգային առանձնահատկությունները, հաշտարարի դերը և հաշտարարության միջոցով վեճի կարգավորման (լուծման) կառուցակարգը:

«Հաշտարարության իրականացման նախադրյալները, հաշտարարության վերաբերյալ համաձայնությունը» վերտառությամբ 2.2 պարագրաֆում ներկայացվել են դատական և արտադատական հաշտարարության իրականացման նախադրյալները, Հաշտարարության վերաբերյալ համաձայնությանը ներկայացվող պահանջներին, վեճի կարգավորման մինչդատական (արտադատական) կարգի պահպանվածության պահանջները՝ համապատասխան դատավարական հետևանքներով:

«Հաշտարարության փուլերը և իրականացման կարգը» վերտառությամբ 2.3 պարագրաֆում ներկայացվել են հաշտարարության ընթացակարգի փուլերն ու ենթափուլերը, սկիզբն ու ավարտի հիմքերը:

Երրորդ գլուխը՝ «Հաշտության համաձայնությունը որպես հաշտարարության գործընթացի արդյունք» վերտառությամբ, բաղկացած է չորս պարագրաֆից:

«Հաշտարարության արդյունքի բնութագիրն ու առանձնահատկությունները» վերտառությամբ 3.1 պարագրաֆում ներկայացվել են հաշտության համաձայնության իրավական բնույթն ու առանձնահատկությունները:

«Հաշտության համաձայնության տարրերը» վերտառությամբ 3.2 պարագրաֆում ներկայացվել են հաշտության համաձայնության կառուցվածքային բաղադրիչները՝ սուբյեկտները, օբյեկտը, առարկան և բովանդակությունը:

«Հաշտարարության արդյունքում կնքված հաշտության համաձայնության հաստատումը դատարանի կողմից» վերտառությամբ 3.3 պարագրաֆում ներկայացվել են հաշտության համաձայնությունը հաստատելիս դատարանի կողմից ստուգման ենթակա հարցերի շրջանակը և հաշտության համաձայնության հաստատումը մերժելու հիմքերը:

«Հաշտության համաձայնության հաստատման դատավարական հետևանքները» վերտառությամբ 3.4 պարագրաֆում ներկայացվել են հաշտության համաձայնության հաստատման դատավարական հետևանքները՝ վերլուծելով գործի վարույթի կարճման, նույն հայցով կրկին դատարան դիմելու անթույլատրելիության, դատական ծախսերի բաշխման և հաշտության համաձայնությունը հաստատելու մասին վճռով հաստատված փաստերի նախադատելիության հարցերը:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները՝

1. Հաշտարարությունը՝ *որպես վեճի կարգավորման ընթացակարգ* վիճե-

լի իրավահարաբերության մասնակիցներին հնարավորություն է ընձեռում կամքի ինքնավարության եզրամասնագրի ազատության սկզբունքների գործողության պայմաններում կարգավորել վեճը՝ չկաշկանդվելով այն իրավունքով կամ շահով, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, վեճի ենթակայությամբ, գործին մասնակցող անձանց սուբյեկտային կազմով, սակայն այս դեպքում հաշտարարությունն ավարտվում է առանց դատարանի կողմից հաշտության համաձայնության հաստատման, ուստի՝ հաշտության համաձայնության անվավերությունը բացառելու նպատակով անհրաժեշտ է արտադատական հաշտարարության դեպքում հաշտարարին վերապահել հաշտության համաձայնության օրինականությանը հետևելու գործառույթ:

2. Հաշտարարության կամավորության սկզբունքը բացարձակ բնույթ չունի եզրօժանկանում իրացվում է մասամբ, քանի որ ազգային իրավական համակարգերում հաշտարարության ներդրման սկզբնական փուլերում հաշտարարության՝ որպես պարտադիր ընթացակարգի նախատեսումն ունի էական նշանակություն՝ հաշտարարության կիրառությունը խրախուսելու և դրա վերաբերյալ հանրային պատշաճ ընկալում ձևավորելու տեսանկյունից: Միաժամանակ, հաշտարարության՝ որպես պարտադիր ընթացակարգի նախատեսումն անհրաժեշտ է դիտարկել Մահմանադրությամբ երաշխավորված **արդյունավետ** դատական պաշտպանության իրավունքի համատեքստում և պարտադիր հաշտարարությունն նախատեսել միայն պայմանով, որ այն բացասաբար չանդրադառնա դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետության վրա և ապահովի բավարար երաշխիքներ արդար դատաքննության իրավունքի տարրերի, ամենից առաջ՝ ողջամիտ ժամկետներում գործի քննության ապահովման տեսանկյունից:

3. Պարտադիր հաշտարարության մեխանիզմը կողմերին պարտադրում է միայն սկսել հաշտարարություն, սակայն չի պարտադրում արդյունքում հասնել համաձայնության: Հետևաբար, հաշտարարության մասնակցի համար պետք է անվերապահորեն երաշխավորվի հաշտարարությունից ցանկացած պահի (առաջին իսկ հանդիպումից հետո) հրաժարվելու իրավունքը, եթե վերջինս համարում է, որ հաշտարարության ընթացակարգն արդյունավետ չէ, այլապես՝ հաշտարարության հետագա ընթացքը շարունակելը կարող է կրել ձևական բնույթ՝ հանգեցնելով գործի քննության ժամկետների անհիմն ձգձգման:

4. Պարտադիր հաշտարարության ներդրումը և հաշտեցման ընթացակարգերի զարգացումն ամենից առաջ պետք է համապատասխանեն վիճելի իրավահարաբերության մասնակիցների շահերին: Այս առումով նախքան դատարան դիմելը հաշտարարության իրականացման պարտադիր պահան-

ջի նախատեսումն անխուսափելիորեն ազդելու է դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության վրա՝ այն դեպքում, երբ ակնհայտորեն առկա չեն երկխոսության և հաշտության եզրեր (կողմերի մասնակցությունը կարող է կրել ձևական բնույթ՝ հանգեցնելով գործի քննության ժամկետների անհիմն ձգձգման): Հետևաբար, անհրաժեշտ է զուգահեռաբար նախատեսել կողմի՝ **հիմնավորված միջնորդությամբ** դատարանի կողմից վերջինիս նախքան դատարան դիմելը հաշտարարության իրականացման պարտադիր պահանջից ազատելու հնարավորություն:

5. Հարկադիր հաշտարարության դեպքում դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելիս կարևորում ենք հաշտարարությունից հրաժարվելու դրդապատճառների ուսումնասիրությունը: Պատճառների հարգելիությունը գնահատելիս դատարանը պետք է հավասարակշռության մեջ դիտարկի իրավունքի չարաշահման արգելքը և տնօրինչականության սկզբունքը՝ հաշվի առնելով հաշտարարությունից հրաժարվող կողմի ներկայացրած պատճառների ողջամտությունը: Միաժամանակ, որպես հաշտարարությունից հրաժարվող կողմի վրա դատական ծախսերը լրիվ կամ մասնակի դնելու պայման կարող է դիտարկվել հրաժարման՝ որպես խախտման և համապատասխան սանկցիայի համաչափությունը՝ այնպես, որ արդյունքում կողմը չհայտնվի ավելի անշահեկան վիճակում, քան մինչև դատարան դիմելը:

6. Դատական ծախսերը գործին մասնակցող անձի վրա լրիվ կամ մասնակի դնելու կառուցակարգը դատարանին հնարավորություն է ընձեռում գնահատել հաշտարարությունից հրաժարվելու պատճառների հարգելիությունն ու ողջամտությունը՝ համապատասխանաբար կիրառելով համաչափ սանկցիա: Ուստի, դատական ծախսերը հաշտարարությունից հրաժարվող գործին մասնակցող անձի վրա մասնակի դնելու կառուցակարգից հրաժարվելու փոխարեն առավել նպատակահարմար է որոշակիացնել նշված սանկցիայի կիրառելիության պայմանները:

7. Հաշվի առնելով, որ ՔԴՕ 186-րդ հոդվածի 1-ին մասը գործին մասնակցող անձի համար երաշխավորում է **հաշտարարությունն սկսելուց հետո ցանկացած պահի հաշտարարության գործընթացը դադարեցնելու** իրավունքը, ելել ենք այն եզրահանգմանը, որ գործին մասնակցող անձի՝ հաշտարարությունից հրաժարվելն անհարգելի ճանաչելու և հաշտարարությանն առանց հարգելի պատճառների մասնակցելուց հրաժարված կողմի վրա դատական ծախսերը դնելու վերաբերյալ սանկցիան կիրառելի է բացառապես այն դեպքերում, երբ կողմը գործընթացից հրաժարվել է **նախքան այն սկսելը**:

8. Անհրաժեշտ է դատարանին ընձեռել վեճը հաշտարարի միջոցով լուծելու վերաբերյալ համաձայնության առկայության պայմաններում գործն ըստ էության քննելու հնարավորություն՝ ՔԴՕ 180-րդ հոդվածի 1-ին մասի 4-

րդկետում նախատեսելով համապատասխան բացառություն՝ զուգահեռաբար օրենքով ամրագրելով իրավունքների նշաների այն շրջանակը, որոնցով կնքված հաշտարարության վերաբերյալ համաձայնությունը կողմին չի գրկում վեճը դատարան հանձնելու իրավունքից (սույն աշխատությունում ներկայացված գերակա շահերի առկայության պարագայում):

9. Գաղտնիության վերաբերյալ պայմանի առկայության հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում կողմերը գրկվում են նույն անձանց միջև, նույն առարկայի մասին նմիևնույն հիմքերով վեճի վերաբերյալ կրկին դատարան դիմելու իրավունքից այն պարագայում, երբ *դատարանը չի ստուգում նշված ընթացակարգի օրինականությունը* (ինչպես օրինակ՝ արբիտրաժի վճռի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու գործընթացում): Ուստի, առնվազն սույն աշխատությունում ներկայացված գերակա շահերի առկայության պարագայում անհրաժեշտ է բացառել գաղտնիության պայմանի առկայության հիմքով առանց դատարանի կողմից հաշտության համաձայնությունը հաստատելու գործի վարույթը կարճելու հնարավորությունը:

10. Գաղտնիության վերաբերյալ պայմանի առկայության դեպքում գործի վարույթը կարճվում է՝ առանց դատարանի կողմից հաշտության համաձայնության օրինականությունը ստուգելու: Արդյունքում՝ գործի վարույթը կարճելու վերաբերյալ դատարանի եզրափակիչ դատական ակտը ձեռք է բերում բացառիկության հատկանիշ՝ բացառելով նույնական հայցի հարուցումը նկողմերը գրկվում են հաշտության համաձայնության հարկադիր կատարման հնարավորությունից: Նշված դեպքում վեճը կարգավորվում է կողմերի տնօրինչական գործողությունների արդյունքում նդատարանը չի ստուգում կնքված հաշտության համաձայնության օրինականությունը, հետևաբար՝ անհրաժեշտ է ՔԴՕ 183-րդ հոդվածի 8-րդ մասում կատարել լրացում՝ սահմանելով, որ գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին նմիևնույն հիմքերով վեճի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել դատարան, բացառությամբ այն դեպքի, երբ գործի վարույթը կարճվել է առանց հաշտության համաձայնությունը հաստատելու և առկա են ՔԴՕ 151-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ հաշտության համաձայնության հաստատումը մերժելու հիմքերը:

11. Իրավունքի տվյալ ճյուղում հաշտարարության կիրառման հնարավորությունը չի ենթադրում մեխանիկորեն հաշտարարության նշանակում նդատարանից պահանջվում է հաշտարարությամբ վեճի կարգավորման հավանականությունը գնահատելիս դրսևորել բարձր պրոֆեսիոնալիզմ, հոգեբանական, սոցիալական և այլ հմտություններ, ունենալ հարուստ կենսափորձ: Օրենսդրի կողմից որպես դատարանի նախաձեռնությամբ հաշտարար-

րության նշանակման չափանիշ դիտարկվել է վեճը հաշտությամբ ավարտելու հավանականությունը, ուստի՝ անհրաժեշտ է ՔԴՕ 184-րդ հոդվածում ամրագրել, որ յուրաքանչյուր գործով հաշտարարություն նշանակելիս դատարանը պարզում է տվյալ գործով հաշտարարության կիրառման հնարավորությունը՝ համակցության մեջ դիտարկելով կողմերի միջև առկա վեճի բնույթը, ինչպես նաև օբյեկտիվ կառուցված գործոնները:

12. Վճռաբեկ դատարանում բողոքի քննության փուլում նախատեսված չէ հաշտարարության դիմելու հնարավորություն՝ Վճռաբեկ դատարանի սահմանադրական դերին կառաքելությանը համապատասխան, ուստի՝ անհրաժեշտ է հրաժարվել վերաքննիչ դատարանում հաշտարարություն նշանակելու հնարավորությունից՝ դատավարական օրենքը համապատասխանեցնելով վերաքննիչ դատարանների՝ Սահմանադրությամբ կանխորոշված դերին կառավարական վերանայման գործառնության էությունը:

13. Վերաքննիչ դատարանի լիազորությունները վերջինիս հնարավորություն չեն ընձեռում հաստատել իր կողմից նշանակված հաշտարարության արդյունքում կնքված հաշտության համաձայնությունը և դրանով իսկ չեն կանխորոշում բողոքարկված դատական ակտի իրավաբանական ճակատագիրը: Ուստի, անհրաժեշտ է ՔԴՕ 380-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում «հաշտության համաձայնությունը» բառերից հետո լրացնել «ներառյալ՝ հաշտարարության արդյունքով կնքված» բառերը:

14. Վեճի կարգավորման արտադատական կարգի պահպանվածությունը ստուգելիս դատարանը պարտավոր է ստուգել արբիտրաժային համաձայնությանը կամ հաշտարարության վերաբերյալ համաձայնությանը՝ օրենքով ներկայացվող վավերապայմանների պահպանվածությունը և եթե օրենքով նախատեսված չէ նշված համաձայնություններով կողմերի միջև առկա վեճի կարգավորմանն ուղղված գործողությունների իրականացման ժամկետներն ու հերթականությունը համաձայնությամբ նախատեսելու պարտադիր պահանջ, դատարանը չի կարող շրջանցել օրենքի պահանջները և նշված համաձայնություններին՝ ներկայացնել օրենքով չնախատեսված լրացուցիչ պահանջներ: Միաժամանակ, անհրաժեշտ է ՔԴՕ-ում հստակեցնել վեճի կարգավորման արտադատական կարգ սահմանող յուրաքանչյուր ընթացակարգի դեպքում հայցադիմումում նշվող գործողությունների կատարման միջոցով կցվող ապացույցների ցանկը, որոնց միջոցով կողմերը կարող են հիմնավորել, իսկ դատարանը՝ գնահատել վեճի կարգավորման արտադատական կարգի պահպանվածությունը:

Ուստի, արտադատական կարգի պահպանվածությունը ստուգելիս դատարանի խնդիրն է պարզել վեճի կարգավորման արտադատական կարգի բովանդակությունը՝ օրենքով նախատեսված պահանջների կատարման

մում նշված գործողությունների նկից ապացույցների հիման վրա: Առանց նշված կարգի պահպանվածությունը ստուգելու դատարանի կողմից ՔԴՕ 127-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով հայցադիմումը վերադարձնելը կարող է խախտել անձի՝ դատական պաշտպանության իրավունքը՝ դիտարկվելով որպես ձևական խոչընդոտ:

15. Հաշտարարության գործընթաց սկսելը կասեցնում է հայցային վաղեմության ժամկետի հաշվարկը բացառապես այն դեպքում, երբ հաշտարարության գործընթացը սկսվել է հաշտարարության մասին համաձայնության հիման վրա: Հետևաբար, համապարփակ կարգավորումներ նախատեսելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 339-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ այնպես, որ հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կասեցնելու հիմքերը ներառեն ոչ միայն հաշտարարության մասին համաձայնության հիման վրա իրականացվող հաշտարարության դեպքերը, այլև՝ օրենքի հիման վրա իրականացվող հաշտարարության դեպքերը:

16. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը կանխորոշում է վեճերի այն շրջանակը, որոնցով որոշում կայացնելու բացառիկ իրավասությունը օրենքով վերապահված է դատարանին նկողմերն իրավասու չեն նախատեսել դիսպոզիտիվ կարգավորումներ, ուստի՝ հաշտության համաձայնության՝ օրենքի պահանջներին համապատասխանությունը ստուգելիս կարևոր է հաշվի առնել, որ վերը նշված վեճերով որոշում կայացնելու բացառիկ իրավասությունը օրենքով վերապահված է դատարանին նկողմերն իրավասու չեն նախատեսել դիսպոզիտիվ կարգավորումներ: Մասնավորապես՝ գործարքն անվավեր ճանաչելը կամ դատարանի կողմից առոչինչ գործարքի անվավերության հետևանքները կիրառելը, իրավաբանական անձի լուծարման որոշ դեպքեր (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերով), հիմնադրամի կանոնադրության փոփոխության նայն լուծարելու, բաժինն առանձնացնելու, հարկադիր սերվիտուտի, բնակելի տարածության նկատմամբ գրանցված անհատույց օգտագործման իրավունքը սեփականատիրոջ պահանջով դադարեցնելու, գրավի առարկայի վրա դատական կարգով բռնագանձում տարածելու, գույքի վրա բռնագանձում տարածելու միջոցով գույքը առգրավվելու, գործարքը կատարած կողմի պահանջով այն վավեր ճանաչելու, պայմանագիրը կնքելուն հարկադրելու, օրենքով սահմանված կանոնների խախտմամբ անցկացված սակարկություններն անվավեր ճանաչելու, պայմանագիրը փոփոխելու կլոծելու, պետական պայմանագիր կնքելուն պարտադրելու, նվիրատվությունը վերացնելու, վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքերը:

17. Հաշտարարության արդյունքում կնքված հաշտության համաձայնությունը հաստատելիս դատարանը գործն ըստ էության չի քննում, ապացույցներ չի հետազոտում և հետազոտված ապացույցների հիման վրա փաստեր չի հաստատում, մինչդեռ՝ ապացուցելուց ազատելու հիմքը նախկինում *քննված* գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերի հաստատված լինելն է: Հաշտության համաձայնությունը հաստատելու մասին վճռով հաստատված հանգամանքների նախադատելիությունը բացառող հիմք է նաև այն փաստը, որ այդ գործերով ապացուցման առարկան հստակ չէ, քանի որ ապացուցման ենթակա փաստերի շրջանակը դատարանի կողմից չի հաստատվում: Ուստի, անհրաժեշտ է ՔԴՕ 61-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսել բացառություն՝ հաշտության համաձայնությունը հաստատելու մասին եզրափակիչ դատական ակտերի նախադատելիության հատկանիշի մասով:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Սարուխանյան Ս., «Հաշտարարության՝ որպես վեճերի լուծման այլընտրանքային ընթացակարգի էությունն ու առանձնահատկությունները» ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, 2019, 2(2) 2018, էջեր 386-404:

2. Սարուխանյան Ս., «Հաշտարարության կամավորությունը նպարտադիր հաշտարարությունը որպես կամավորության սկզբունքից բացառություն» Օրինականություն, № 119, Երևան, 2020, էջեր 48-55:

3. Սարուխանյան Ս., «Հաշտարարության իրականացման պայմանները. հաշտարարության վերաբերյալ համաձայնությունը որպես հաշտարարության միջոցով վեճի կարգավորման հիմք» Դատական իշխանություն, հուլիս-օգոստոս 2020, № 7-8 (253-254) էջեր 71-84:

4. Մեղրյան Ս., Սարուխանյան Ս., «Հաշտարարության դատավարական ասպեկտները» Դատական իշխանություն, նոյեմբեր-դեկտեմբեր 2020, № 11-12 (257-258) էջեր 49-63:

5. Սարուխանյան Ս., «Նախքան դատարան դիմելը պարտադիր հաշտարարության ներդրման հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում» Դատական իշխանություն, հունվար-մարտ 2022, № 1-3 (271-273) էջեր 48-58:

6. Սարուխանյան Ս., «Հաշտության համաձայնության իրավական բնույթն ու կնքման դատավարական հետևանքները» Դատական իշխանություն, հուլիս-սեպտեմբեր, 2022, № 7-9 (277-279) էջեր 36-46:

ИНСТИТУТ МЕДИАЦИИ В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ РА

РЕЗЮМЕ

Внедрение примирительных процедур является одним из приоритетных направлений совершенствования судоустройства. Их распространение и эффективное использование способствуют значительному снижению загруженности судов, что, в свою очередь, приводит к значительному повышению эффективности работы судов.

Судебная форма защиты всегда преобладала над другими формами защиты нарушенных или оспариваемых прав сторон, в связи с гарантиями судебной власти. Однако, гарантируя свободу экономической деятельности и рыночную экономику, стороны отдают предпочтение альтернативным процедурам разрешения споров, в том числе медиации, что обусловлено рядом преимуществ данной процедуры. Процедуры медиации позволяют сторонам самостоятельно урегулировать спор на взаимоприемлемых и выгодных условиях.

В целом медиация является добровольной процедурой, но в целях содействия ее применению на начальных этапах ее можно предусмотреть как обязательную процедуру. При этом судебные санкции могут быть применены в случае необоснованного отказа от медиации, но важно гарантировать законность и соразмерность их применения.

В Республике Армения существуют правовые основы для эффективного использования медиации, но из изучения статистических данных о назначении медиации видно, что она еще не получила широкого распространения. К причинам, вызывающим ненадлежащее применение медиации, можно отнести тот факт, что ни в законе о медиации, ни в Гражданском процессуальном кодексе не определен круг критериев, которые могут использоваться судами в качестве ориентира для оценки возможности успешного применения медиации в конкретной ситуации. Кроме того, не разработаны положения о процедуре медиации и кодексы поведения профессиональных медиаторов. Эти проблемы создают некоторые трудности и противоречивую практику в отношении медиации.

Кроме того, институт медиации был введен совсем недавно, и с момента его введения не проводилось полного теоретического анализа института

медиации с целью выделения проблем, возникающих при практическом применении, и предложения их решений. Между тем, ее эффективное функционирование может способствовать снижению уровня загруженности судебной системы, способствовать эффективности судебной защиты, влиять на качество судебных актов.

Таким образом, возникает необходимость глубоко изучить институт медиации, случаи, когда судьи должны рекомендовать и назначить медиацию, ситуации, исключающие возможность назначения медиации, выявить процессуальные особенности медиации, указать ее преимущества, представить судебные последствия заключенного медиативного соглашения, предложить законодательные решения для превращения медиации в более востребованную форму разрешения споров. Важность обозначенных выше проблем и необходимость предложить эффективные пути их решения определяют актуальность данного исследования.

Научная новизна диссертации заключается в том, что это первое комплексное исследование теоретических и практических вопросов института медиации в рамках недавно принятого законодательства. Автор попытался проанализировать как теоретические, так и практические проблемы, которые могут возникнуть при применении медиации. В результате были сделаны как теоретические обобщения, так и научно-практические предложения. Диссертация имеет не только теоретическое, но и практическое значение, поскольку представленные автором предложения и выводы могут быть использованы для внесения изменений в законодательство и правоприменительную практику.

Основные положения диссертации нашли свое отражение в положениях, выносимых на защиту диссертации, и в опубликованных автором научных статьях.

TATEVIK ARSEN SARUKHANYAN

**THE INSTITUTE OF MEDIATION IN THE
CIVIL PROCEDURE OF THE RA**

SUMMARY

The investment of mediation procedures is one of the priority directions for improving the judiciary. Their dissemination and effective utilization contribute to a significant reduction in the workload of courts, which, in turn, leads to a significant increase in the efficiency of courts.

The judicial form of protection has always prevailed over the other forms of protection of the violated or disputed rights of the parties, due to the guarantees of the judiciary. However, guaranteeing the freedom of economic activity and market economy, parties prefer alternative dispute resolution procedures, including mediation, which is due to a number of advantages of this procedure. Mediation procedures allow the parties to independently settle the dispute on mutually acceptable and beneficial terms.

In general, mediation is a voluntary procedure, but in order to promote its application in the initial stages, it may be envisaged as a mandatory procedure. At the same time, judicial sanctions can be applied in case of unsubstantiated refusal to mediation but it is vital to guarantee the legality and proportionality of their application.

In the Republic of Armenia, there are sufficient legislative grounds for the effective use of mediation, but from the study of statistical data on the appointment of mediation, it is clear that it has not yet gained widespread use.

The reasons that cause an improper utilization of mediation might include the fact that neither the law on mediation nor the Civil procedure code does not determine the scope of criteria that might be used by the courts as a guide to estimate whether mediation can be successfully applied in a specific situation. Besides, there are not developed regulations on mediation procedure and codes of conducts for professional mediators. These problems create some difficulties and contradicting practice regarding mediation.

In addition, the institution of mediation was introduced quite recently, and since its introduction, a complete theoretical analysis of the institution of mediation has not been carried out in order to highlight the problems arising during practical

application and to propose their solutions. Meanwhile, its effective operation can contribute to reducing the level of workload of the judicial system, contribute to the effectiveness of judicial protection, and influence the quality of judicial acts.

Thus, there is a necessity to study profoundly the institute of mediation, the cases where judges should recommend and appoint mediation, the situations that exclude the possibility to appoint mediation, reveal the procedural peculiarities of mediation, indicate its advantages, introduce the judicial consequences of concluding mediation agreement, propose legislative solutions for making mediation a more required dispute resolution form.

The importance of the abovementioned issues and the need to suggest effective solutions for them determine the relevance of this study.

The scientific novelty of the dissertation lies in the fact that it is the first comprehensive research on theoretical and practical issues regarding the institute of mediation in the scope of the recently adopted legislation.

The author has attempted to analyze both theoretical and practical issues that might exist while applying mediation. As a result, both theoretical generalizations and scientific-practical suggestions were made. The dissertation has not only theoretical but also practical value as the suggestions and conclusions presented by the author can be utilized for legislative amendments and law enforcement practice.

The fundamental provisions of the dissertation have been reflected properly in the provisions presented to the defense of the thesis and in the scientific articles published by the author.